ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

✓**Կարևոր է իմանալ, որ** ջրհեղեղը տեղանքի ժամանակավոր աղետալի ջրածածկումն է, որն առաջանում է ինտենսիվ անձրևների, արագ ձնհալքների, գետերի մակարդակի բարձրացման, ինչպես նաև ջրամբարներում հնարավոր տեխնածին վթարների հետևանքով: ՀՀ-ում աղետալի ջրհեղեղներ են եղել 1936, 1938, 1948, 1951, 1953, 1956, 1963, 1968, 2024 թթ.:

✓**Հիշե՛ք,** ջրհեղեղի հետևանքները կարող են կործանարար լինել յուրաքանչյուրի, հատկապես երեխաների և նրանց ընտանիքների համար: Եթե դուք բնակվում եք ջրհեղեղավտանգ տարածքում, ապա հետևե՛ք փորձագետների խորհուրդներին:

112 rescue.mia.gov.am

ՀԱՄՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼ Է ՄԱԿ-Ի ՓԱԽԱՏԱԿԱՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

UNHCR The UN Refugee Agency

Co-funded by European Union Humanitarian Aid

ՀՀ ԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՋՐՀԵՂԵՂ

ՆԳՆ փրկարար ծառայությունը հորդորում է քաղաքացիներին լինել իրազեկված և պահպանել զգոնություն:



ԻՆՉՊԵ՞Ս ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՋՐՀԵՂԵՂԻՆ

Խոսե՛ք ձեր ընտանիքի հետ ջրհեղեղների մասին և դրանց առաջացման պատճառների մասին:

Անվտանգության պլան կազմե՛ք: Գտե՛ք տարհանման անվտանգ երթուղի, որով կարող եք անցնել ջրհեղեղի դեպքում ձեր ընտանիքի հետ: Միասին որոշե՛ք միմյանց կորցնելու դեպքում ձեր հանդիպման վայրը:

Ստեղծե՛ք «արտակարգ իրավիճակների կապոց», որը կներառի՝

- չփչացող մթերք,
- դեղամիջոցներ,
- առաջին օգնության արկղիկ,
- լապտեր,
- մարտկոցներ,
- ջուր մի քանի օրվա համար, եթե անհրաժեշտություն լինի լքելու ձեր տարածքը, կամ ծառայությունները դադարեցվեն:

Սովորե՛ք լողալ: Ջրհեղեղների ժամանակ մահերի մեծ մասը ջրահեղձման հետևանքով է:

Պահե՛ք փաստաթղթերը անվտանգ տեղում: Պահե՛ք կարևոր փաստաթղթերը, օրինակ՝ նույնականացման քարտը, կա՛մ բարձր տեղում, կա՛մ ինչ-որ բանի մեջ, որը կարող է պաշտպանել դրանք ջրից վնասվելուց (օրինակ՝ փակվող պլաստիկ տոպրակի մեջ), որպեսզի նվազագույնի հասցվի վնասը:

ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

- հորդառատ տեղումներ
- ձնհալք
- պատնեշների փլուզում

Ի՞ՆՉ ԱՆԵԼ ՋՐՀԵՂԵՂԻ ԺԱՄԱՆԱԿ

- Հետևե՛ք տեղական իշխանությունների հայտարարություններին: Օդերևութաբանների կանխատեսումների և պաշտոնական խորհրդատվության համար հետևե՛ք նորություններին կամ միացե՛ք տեղական ռադիոկայանին: Եթե ձեզ խորհուրդ են տալիս տարհանվել, վերցրե՛ք ձեր առաջին օգնության կապոցը և նույնականացման փաստաթղթերը, արե՛ք դա անմիջապես: Եթե արագ արձագանքման ծառայությունները պատնեշներ են տեղադրել, մի՛ փորձեք շրջանցել դրանք, քանի որ դրվել են մարդկանց վտանգավոր տարածքներից հեռու պահելու համար:
- Ապահովե՛ք ձեր տան անվտանգությունը: Տնից դուրս գալուց առաջ անջատե՛ք սարքերը, էլեկտրականությունը, գազը, ջուրը և այլն, եթե ունեք ժամանակ, և դա անելն անվտանգ է:
- Տեղափոխվե՛ք բարձրադիր վայր: Կանգնած, հոսող կամ բարձրացող ջրից խուսափելու համար տեղափոխվե՛ք բարձրադիր վայր: Մի՛ փորձեք քայլել, լողալ կամ մեքենա վարել արագ հոսող հեղեղի միջով: Եթե ձեր մեքենայի մեջ եք, և այն լցվում է ջրով, բարձրացե՛ք մեքենայի վրա: Եթե փակված եք շենքում, բարձրացե՛ք ամենաբարձր հարկը և միայն անհրաժեշտության դեպքում բարձրացե՛ք տանիք: Մի՛ փակվե՛ք ձեր տան ամենաբարձր տարածքում, օրինակ՝ ձեղնահարկում կամ վերնահարկում, քանի որ հեղեղի պատճառով գուցե չկարողանաք դուրս գալ:
- Թույլ մի՛ տվեք երեխաներին մտնել հոսող կամ կանգնած ջրի մեջ: Նույնիսկ եթե նկուղում ջուրը քիչ քանակությամբ է, դա կարող է վտանգել ձեր երեխայի առողջությունը:

Ի՞ՆՉ ԱՆԵԼ ՋՐՀԵՂԵՂԻՑ ՀԵՏՈ

- ուշադիր հետախուզել կացարանի հիմքի ամբողջությունը, պատերի, պատուհանների և հատակի վիճակը, հաղորդակցության համակարգը, թունավոր օձերի հնարավոր առկայությունը, (նշել՝ որպես կանոն օձերը....)
- ստուգել սննդի պիտանիությունը, օգտագործելուց առաջ լվանալ եռացրած ջրով,
- խմելու ջուրն օգտագործել սանիտարական ստուգումից կամ եռացնելուց հետո,
- չօգտագործել ջրում հայտնված սննդամթերքը,
- նախքան հաղորդակցության համակարգերից օգտվելը, ստուգել դրանց վնասվածության աստիճանը,
- չմնալ այն տանը, որը վթարային է կամ վստահություն չի ներշնչում: